Լոտ 1. ՀՀ ք. Երևան, Կենտրոն Տերյան փողոց 8 շենք, 46/1 հասցեում գտնվող անշարժ գույք:

Համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 19092025-01-0101 վկայականի *«Գրանցման համար հիմք հանդիսացած փաստաթղթերը»* բաժնի, գրանցման համար հիմք է հանդիսացել՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում սնանկության գործ թիվ ՍՆԴ/0015/02/23 05/04/2024թ.:

Համաձայն նույն վկայականի *«Գրանցված իրավունքի սուբյեկտ(ներ)»* բաժնի, նշված անշարժ գույքը գրանցված է Արիստակես Էդուարդի Հովհաննիսյանի անվամբ:

Համաձայն նույն վկայականի *«Շինությունների բնութագրերը»* բաժնում արտացոլված տվյալների՝ 1) Նպատակային նշանակությունը՝ հասարակական, 2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/Հ	Կադաստրային ծածկագիր	Տեսակ	Մակերես	Գրանցված իրավունքի տեսակ
1	01-006-0426-0010-001-109	կիսակառույց հյուրանոցային համալիր	115.1 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
2	01-006-0426-0010-001-103	Տարածք	5.4 քմ	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Համաձայն նույն վկայականի *«Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ»* բաժնում արտացոլված տվյալների՝ Առկա է 8.7քմ մակերեսով ինքնակամ կառուցված շինություն: Շենքի պահպանման և սպասարկման համար անհրաժեշտ /հատկացված/ 2790.0քմ մակերեսով հողամասի և 315.1քմ մակերեսով շենքի ընդհանուր բաժնային սեփականության գույքի նկատմամբ սեփականատիրոջ /սեփականատերերի/ բաժնեմասը կազմում է 12000/1445026: 5.4քմ մակերեսը հանդիսանում է ընդհանուր բաժնային սեփականություն Տերյան փող. 8 շենք 46 և 46/1 տարածք հասցեների սեփականատերերի համար 1/2 բաժնեմասերով:

Համաձայն ՀՀ կադաստրի կոմիտեի թիվ ՄՏ-03022026-01-0352 միասնական տեղեկանքի, առկա է ՕՏԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԱՐԺԵՔԻ ՎՃԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆ:

Համաձայն ՀՀ կադաստրի կոմիտեի ԹԻՎ ԱՏ-09022026-01-1198 «ՏԵՂԵԿԱՆՔ ԳՈՒՅՔԻ ԱՌԱՆՁԻՆ ՈՐԱԿԱԿԱՆ ՔԱՆԱԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԻ ԵՎ ԴՐԱ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՌԱՆՁԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ (ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻ) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» վերտառությամբ փաստաթղթի տրամադրված՝ 09/02/2026թ-ին, ք.Երևան Կենտրոն, Տերյան փողոց 8 շենք, 46/1 հասցեում գտնվող շինության հողի բաժնեմասը ըստ N 19092025-01-0101 սեփականության իրավունքի վկայականի 0.2790 հա հողամասից կազմում է 12000/1445026, վճարվող հողամասի կադաստրային արժեքը 2026 թվականի դրությամբ կազմում է 7,645,814 ՀՀ դրամ: Միաժամանակ հայտնվում է, որ անշարժ գույքի հետագա օտարման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումը կկատարվի վճարման պահին գործող հողամասի կադաստրային արժեքի վճարման անդորրագիրը ներկայացվելու դեպքում:

7,645,814 ՀՀ դրամի չափով գումարը կարող է փոփոխվել և սնանկության գործով կառավարիչը չի երաշխավորում նշված գումարի հաստատուն լինելու /մնալու/ հանգամանքը:

ՀՀ ք. Երևան, Կենտրոն Տերյան փողոց 8 շենք, 46/1 հասցեում գտնվող անշարժ գույքի տրանսպորտային մատչելիությունը՝ ասֆալտապատ: Տանիքը՝ հարթ, տանիքածածկը՝ գլանափաթեթային, միջհարկային ծածկը՝ երկաթբետոնե սալեր, շենքի տիպը միաձույլ: Առկա են բոլոր ենթակառուցվածքները:

Մուտքի դուռը մետաղական է, փայտե երեսվածքով, ներսի դռները՝ փայտյա, պատուհանները՝ մետաղապլաստե:

Միջանցքի և հյուրասենյակի հատակը՝ մանրահատակ, պատերը՝ ներկած, առաստաղը՝ կախովի: Սենյակների հատակը՝ մանրահատակ, պատերը՝ ներկած և պաստառապատ, առաստաղը՝ ներկած: Խոհանոցի հատակը՝ մանրահատակ, պատերը՝ սալիկապատ և ներկած, առաստաղը՝ ներկած: Սանհանգույցի հատակն ու պատերը՝ սալիկապատ, առաստաղը՝ պլաստմասե վահանակներ:

Առկա են կիրառված սահմանափակումներ, թիվ ՍՆԴ/0015/02/23 սնանկության գործով ՀՀ սնանկության դատարանի, ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի և «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի գրանցված գրավի իրավունքը՝ 03.02.2026թ. դրությամբ: Հետագայում այլ սահմանափակումների կիրառման վերաբերյալ երաշխիք չի տրվում:

Լոտի մեկնարկային գինը կազմում է՝ **94,770,000** ՀՀ դրամ: